ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1907—1921)

ՍԱՍՈՒՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

1907 թ. ստեղծվեց սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական կազմակերպությունը։ Դրա կազմակերպման նախաձեռնությունն իրենց ձեռքն էին վերցրել այսպես կոչված «անջատականները» կամ «երիտասարդ դաշնակցականները», որոնք Լ. Աթաբեկյանի (Ռիխարդ) և Ա. Ամիրյանի գլխավորությամբ 1906 թ. հեռացել էին դաշնակցություն կուսակցությունից։

1906 թ. Ա. Ամիրյանը հրապարակում է «ժամանակն է սթափվելու։ Դաշնակցականի դիմումը իր ընկերներին», 1907 թ.՝ «Դաշնակցության կրիզիսը։ Մի դիմում դաշնակցական բանվորության», իսկ Լ. Աթաբեկյանը՝ «Ինչու՞ ենք անջատվում դաշնակցությունից» գրքույկները[1]։ Բացի այդ, նրանք 1907 թ. հանդես եկան պրոկլամացիայով։ Դրանցում «երիտասարդ դաշնակցականների» առավել աչքի ընկնող ներկայացուցիչները հակադրվում էին դաշնակցությանը, պարզաբանում նրանից անջատվելու դրդապատճառները։ Նրանք քննադատում էին դաշնակցության վարած քաղաքականությունը, բացահայտում նրա կեղծ «սոցիալիստական» ֆրազաբանությունը։ Սակայն «երիտասարդ դաշնակցականների» նպատակը ոչ թե դաշնակցության մերժումն էր, այլ էսէռական երանգներով նրա «բարենորոգումը», այդ կուսակցության գործունեության հարմարեցումը կովկասահայ իրականությանը և պատմական տվյալ ժամանակաշրջանի պահանջներին։ Բացի այդ, առաջադրվում էին ավելի ձախ ծրագիր և ճկուն տակտիկա։ Դաշնակցությունից «երիտասարդ դաշնակցականների» անջատվելը վկայում էր այդ կուսակցության շարքերում առաջ եկած խոր ճգնաժամի մասին։ Նկատի ունենալով «երիտասարդ դաշնակցականների» այդ քայլը և նրանց հրապարակած պրոկլամացիան, Ստ. Շահումյանը գրել է. «Պրոկլամացիան իր բովանդակությամբ ուրախալի երևույթ է այն հայ բանվորների մեջ, որոնց մեծ մասը կանգնած է այսպես կոչված «դաշնակցականների» կուսակցության դրոշի տակ։ Այդ պրոկլամացիան նշան է այն բանի, որ հայ բանվորների մեջ ևս արթնանում է հեղափոխական խիղճն ու դասակարգային գիտակցությունը, պրոկլամացիան նշան է այն բանի, որ հիշյալ կուսակցությունում տեղի է ունենում պառակտում, որ այդ կուսակցությունը քայքայվում և կորցնում է իր ոտքի տակի հողը։ Հասունացած բանվորները փախչում են այդ կուսակցությունից, որը վնաս է բերում նրանց»[2]։

Դաշնակցությունից «երիտասարդ դաշնակցականների» անջատվելու փորձեր նկատվել էին դեռևս 1905 թ.։ Սկսված հեղափոխությունը պարզեցնում, բյուրեղացնում էր հարաբերությունները դասակարգերի, կուսակցությունների, նույն կուսակցության աջ և ձախ թևերի մեջ։ Պառակտվում էր նաև դաշնակցությունը։ 1905 թ. Երևանում ձախ, ղեկավարությունից դժգոհ տարրերը հեռացան դաշնակցությունից և մի քանի էսէռ ուսանողների հետ միասին հիմնեցին էսէռական կազմակերպություն[3]։ Նույնպիսի կազմակերպություն 1906 թ.

---

1 *Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք երկրորդ, Երևան, 1975, էջ 539—540։*

2 *Ստեփան Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1975, էջ 395։*

3 «Знамя труда», Тифлис, 11, IV. 1917.

ստեղծվել էր նաև Բաքվում։ Տեղի նահանգական ժանդարմական վարչությունը Պետերբուրգ՝ ոստիկանության դեպարտամենտ հղած հաշվետվության մեջ հայտնում էր, որ «Բաքվում հայտնաբերված է սոցիալիստ-հեղափոխականների հայկական կազմակերպության լավ սարքավորված տպարանը»[4]։ «Անջատականների» հարցը բազմիցս քննարկման առարկա դարձավ թե էսէռական կազմակերպությունների կոնֆերանսներում ու համագումարներում և թե դաշնակցության խորհրդակցություններում։ Վիճաբանության տեղիք էր տալիս այն հարցը, թե ի՞նչ ձևով պետք է կազմավորվի հայկական էսէռական կազմակերպությունը. որպես սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության առանձին ֆրակցիա՞, որպես առանձին էսէռական հայկական կուսակցությո՞ւն, թե՞ հայ էսէռները պետք է համարվեն սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության սովորական անդամներ։ Այդ հարցը քննարկվեց նաև սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Կենտկոմում և վերջնական լուծում ստացավ էսէռների Կենտկոմի և Անդրկովկասյան մարզային կոմիտեի 1907 թ. հունիսի 14-ին Ժնևում կայացած միացյալ կոնֆերանսում[5]։ Այնտեղ քննարկվում են այն պայմանները, որոնցով «երիտասարդ դաշնակցականները» պետք է մտնեին սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության մեջ։ Ընդունված բանաձևում նշվում էր. «1. Այսուհետև «երիտասարդ դաշնակցականների» կազմակերպությունը դադարեցնում է իր գոյությունը։ 2. Մտնելով սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության մեջ, հայ ընկերները հայկական աշխատավոր մասսաների շրջանում պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման համար կազմակերպում են «սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպությունը» հետևյալ հիմունքներով՝ ա) հայկական էսէռական կազմակերպություններում, որպես սկզբնական կազմակերպություններ, հանդիսանում են հայկական շրջանային կոլեկտիվները, բ) կազմակերպության շրջանային ժողովի անդամներն ընտրվում են շրջանային կոլեկտիվի կողմից, գ) շրջանային կոլեկտիվը հայկական կոլեկտիվի հետ կազմում է շրջանի էսէռական միացյալ կոմիտե, դ) օրենսդիր մարմինը կենտրոնական ժողովն է, ե) կենտրոնական ժողովի անդամները հավաքագրվում են ինչպես հայկական, այնպես էլ միացյալ կազմակերպությունների անդամներից»[6]։

Կոնֆերանսի աշխատանքներն ավարտվելուց հետո սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական կազմակերպությունը 1907 թ. հուլիսին հանդես է գալիս հատուկ «Ազդով», որտեղ ի գիտություն դաշնակցության և էսէռական կուսակցության նշվում էր, որ «երիտասարդ դաշնակցականների կազմակերպության ինքնուրույն գոյությունը դադարեցվում է։ Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ոչ մի հայկական ֆրակցիա կամ հայկական կազմակերպություն, իբրև առանձին ինքնավար կազմակերպություն, իր գործադիր կամ օրենսդիր մարմիններով գոյություն չունի»[7]։ Միաժամանակ նշվում էր, որ «այն տեղերում, ուր բացառապես հայ ազգաբնակչություն է, գոյություն ունեն ս.-հ. կուսակցության կոմիտեներ։ Այն տեղերում, ուր ազգաբնակչությունը խառն է, ինչպես օրինակ Բաքու, Բաթում, Թիֆլիս և այլն, համակուսակցական սկզբնական բջիջներին կից կազմվում են հայկական շրջանային ժողովներ և հայկական շրջանային կոլեկտիվներ։ Իսկ քաղաքային կո-

---

4 Центральный государственный архив Октябрьской революции СССР, ДП, ОО, 1905 г., д. 80, ч. 38, л. 10.

5 А. И. Спиридович. Партия социалистов-революционеров и ее предшественники, 1886—1916, Пг. 1918, с. 404.

6 Նույն տեղում։

7 ՄՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 4043, ց. 1, գ. 1, թ. 49։

միտեները, մարզային համագումարները և կոմիտեները կարող են լինել միայն համակուսակցական»[8]։

Այսպիսով, 1907 թ. հունիսին Բաքվում ձևավորվեց սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական կազմակերպությունը։ Դա ռուսական սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական մասնաճյուղն էր։

Էսէռների հետ դաշնակցականների ծրագրային կապերի, նրանցում իշխող հեղափոխական ֆրազի գրեթե նույնության և դաշնակցականների կուսակցության պառակտման փաստը չի վրիպել Վ. Ի. Լենինի ուշադրությունից։ «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թվականների ռուսական առաջին հեղափոխության ժամանակ» աշխատության մեջ, քննելով տարբեր կուսակցությունների ծրագրերի բովանդակությունը, Վ. Ի. Լենինը նշել է, որ «Դաշնակցությունը»... մոտիկ է էսէռներին, իսկ «երիտասարդները» նույնիսկ մտնում են ս.-հ. կուսակցության մեջ»[9]։

Շուտով էսէռների հայկական կազմակերպության մասնաճյուղեր են ստեղծվում նաև Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում, Շուշիում, Ելիզավետպոլում, Բաթումում և այլ քաղաքներում։ Կազմակերպության անդամների թիվը 1907 թ. ընթացքում գնալով աճում էր։ Դա բացատրվում էր նրանով, որ դաշնակցության շատ անդամներ, որոնք դժգոհ էին կուսակցության քաղաքականությունից և տակտիկայից, հեռացան նրանից և մտան նոր ձևավորվող կազմակերպության մեջ։ Բաքվի էսէռների հայկական կազմակերպությունը 1907 թ. իր շարքերում ընդգրկում էր 670 անդամ, իսկ Թիֆլիսինը՝ 200[10]։ Ընդհանրապես Անդրկովկասում գործող բոլոր հայկական կազմակերպությունները միասին իրենց շարքերում ընդգրկում էին մոտ 1200 անդամ։ Էսէռների հայկական կազմակերպությունում, բացի Լ. Աթաբեկյանից, ակտիվ դեր էին կատարում Վ. Մենախորյանը, Վ. Խորխորունին, Գ. Մելիք-Շահնազարյանը, Գ. Բաղաղ-Աղաջանյանը, Բյուզանդը և ուրիշներ։ 1908 թ. մարտից Բաքվում սկսում է լույս տեսնել էսէռների հայկական կազմակերպության անդրանիկ օրգան «Անիվ» շաբաթաթերթը, որի խմբագիրը Գ. Բաղաղ-Աղաջանյանն էր։ Թերթը հայտարարում էր, որ իրենք ոչ մի կապ չունեն դաշնակցության հետ[11]։

Պետք է նշել, որ «երիտասարդ դաշնակցականների» անջատումը կուսակցությունից և հայ էսէռների կազմակերպության ստեղծումը նկատելի հարված էին դաշնակցությանը, որը սկսած 1905 թ. սլճնվում էր սոցիալիստական ֆրազներով և ճգնում էր աշխատավորների աչքում հեղափոխական երևալ։ Շուտով դաշնակցականները սկսեցին սիրաշահել էսէռներին, էսէռների հայկական կազմակերպությունը որակել որպես «երկու հինավուրց բարեկամների միջև բուսնած անախորժ անջրպետ»[12]։ Էսէռները նույնպես դեմ չէին դաշնակցության հետ համագործակցելուն, հատկապես տեռորի, ագրարային ծրագրի (հողի սոցիալիզացիա) և այլ բնագավառներում։ Ուշագրավ է, որ Վ. Լունկևիչը, որը էսէռական Կենտկոմի անդամ էր և 1917 թ. «Դելո նարոդա» թերթի խմբագիրը, Երևանից «Արարատսկի» ծածկանունով աշխատակցում էր դաշնակցության օրգան «Դրոշակին»[13]։ Նկատի ունենալով էսէռա-դաշնակցական համագործակցությունը, բոլշևիկյան «Պրոլետարիատի կռիվը» թերթը դեռևս 1905 թ. գրում էր. «Ի՞նչ տեսակ վարագույրով էլ որ ծածկվեն, ինչքան էլ որ «դաշնակցական-

---

8 Центральный государственный исторический архив Азерб. ССР, ф. 46, оп. I, д. 1с, л. 75.

9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 16, էջ 471։

10 «Знамя труда», 12, IX. 1907.

11 «Անիվ», 8. VI. 1908։

12 Նույն տեղում, 6. VII. 1908։

13 Մ. Վ. Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և հեղափոխական շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին, Երևան, 1959, էջ 188։

ներին» ականջից բռնած դեպի սոցիալիստական բանակ քարշ տան իրենց արժանավոր բարեկամ «սոցիալիստ-հեղափոխականները» հայ պրոլետարիատը չի խաբվի։ Նա շատ լավ ճանաչում է նրանց և մի րոպե անգամ չի կասկածում, որ «Դաշնակցությունը» իր ամբողջ էությամբ բուրժուական կուսակցություն է»[14]։

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական կազմակերպության համեմատաբար ակտիվ գործունեությունը շարունակվում է մինչև 1909 թ. և ապա երկար ժամանակով ընդհատվում։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, Ա. Մռավյանը գրել է. «...մեծ աղմուկով ծնված այդ վտիտ ու օրապակաս մանուկը շուտով լռում է. նա մտնում է ս.-հ. ընտանիքը և կորցնում իր դեմքը։ Նրանց ղեկավարներն էին հանգուցյալ բժիշկ Լևոն Աթաբեկյանը[15] և Արսեն Ամիրյանը. վերջինս շուտով թոթափեց ս.-հ. փոշին և մտավ բոլշևիկյան կուսակցության մեջ. նա սպանվել է Բաքվի 26 կոմիսարների շարքերում»[16]։

1908 թ. օգոստոսին Լոնդոնում տեղի է ունենում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության առաջին համակուսակցական կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում է նաև էսէռների հայկական կազմակերպության ներկայացուցիչ Բյուզանդը։ Իր զեկուցման մեջ նա նշում է, որ հայերի միջավայրում աշխատանքը տարվում է միայն բանվոր դասակարգի շրջանում, իսկ նրանց մոտ, զեկուցողի կարծիքով, գերակշռում էր հետաքրքրությունը միայն տնտեսական պահանջների նկատմամբ։ Նա ստիպված էր խոստովանել, որ արհմիություններում գերակշռում էին սոցիալ-դեմոկրատ հայ բանվորները, թեև որոշ էսէռ բանվորներ մտել էին նաև այդ միություններում։ Բյուզանդը հայտնում է, որ հաշվետու ժամանակաշրջանում գումարվել է հայկական կազմակերպության մեկ կոնֆերանս, որի աշխատանքներին մասնակցել է 31 պատգամավոր։ Կազմակերպությունը «մարտական ջոկատ» չուներ, սակայն, ինչպես նշել է նա, մարտական բոլոր բնույթի միջոցառումներն անց էին կացվել առանց նրա գոյության անհրաժեշտության։ Զեկուցողը նաև նշում էր, որ կազմակերպության օրգան «Անիվը» տպագրվում էր 1500 օրինակ տպաքանակով, որից տարածվում էր 1200-ը[17]։

Ռեակցիայի տարիներին Անդրկովկասի էսէռական կազմակերպությունները չդիմացան և ջախջախվեցին։ Համեմատաբար կենսունակ դուրս եկավ Բաքվի էսէռական կազմակերպությունը, որի աշխատանքները ճիշտ է թուլացան, բայց շարունակվեցին։ Բաքվի էսէռական կազմակերպության ջանքերով 1909 թ. հոկտեմբերին գումարվում է Անդրկովկասի սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպության մարզային VI համագումարը[18]։ Նրա աշխատանքներին մասնակցում էին հետևյալ կազմակերպությունները՝ Բաթումի (1 ձայն), Օզուրգետի (1 ձայն), Թիֆլիսի (2 ձայն, 1-ը հայկական կազմակերպությունից), մարզային կոմիտեից երկու ներկայացուցիչ և հյուրեր՝ տարբեր քաղաքական կազմակերպություններից։ Համագումարում հայկական կազմակերպության ներկայացուցիչը, չափազանցնելով էսէռների դերը և ակնհայտորեն կեղծելով իրականությունը, փորձում էր իրենց կազմակերպությանը վերագրել հայ մասսաների սոցիալիստական դաստիարակության գործը[19]։ 1909 թ. հայկական կազմակերպության մասնաճյուղեր էին գործում Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և Ալեքսանդրապոլում։ Եթե անգամ այս փաստերը չափազանցված լինեին, այդուհանդերձ նկատվող միտումը վկայում էր այն մասին, որ հայ բանվորների

---

14 «Պրոլետարիատի կոչը», Թիֆլիս, 1. VII. 1905։

15 Լևոն Աթաբեկյանը զոհվել է 1918 թ. ապրիլի 2-ին Բաքվում՝ աղգամիջյան ընդհարումների ժամանակ։

16 Ասքանազ Մռավյան, Հոդվածներ և ճառեր (1913—1929), Երևան, 1961, էջ 120։

17 «Протоколы первой общепартийной конференции П. С.—Р.», Париж, 1908, с. 34—35.

18 «Знамя труда», февраль, 1910.

19 Նույն տեղում։

վրա դաշնակցության և բուրժուազգայնական մյուս կուսակցությունների ազդեցությունը նկատելիորեն նվազում էր։ Այդ բանվորների գերակշռող մասը համախմբվում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շուրջը, իսկ մի նշին մասն էլ հարում էր էսէռներին և մանրբուրժուական սոցիալիստական այլ ուղղություններին։

Հայկական կազմակերպության վերաբերյալ հաշվետվությունը լսելուց հետո համագումարում ընդունվում է հետևյալ բանաձևը. 1) մարզային կոմիտեն առաջարկում է կազմել հանձնաժողով՝ համահայկական կոնֆերանս հրավիրելու համար, 2) կոնֆերանսը պետք է ընտրեր միացյալ կենտրոն, որը կմիավորեր բոլոր հայկական էսէռական կազմակերպությունները։

1910 թ. ոստիկանության հետապնդումների հետևանքով հայտնաբերվում են բազմաթիվ էսէռական կազմակերպություններ, իսկ Բաքվում 1910 թ. ապրիլին բռնագրավվում է տեղական կազմակերպության տպարանը։ Ցարական պահնորդական բաժանմունքը, որը, հավանաբար պրովոկատորների օգնությամբ, ամեն ջանք թափում էր արմատախիլ անելու ոչ միայն սոցիալ-դեմոկրատական, պրոլետարական, այլև դեմոկրատական շարժումը, վերացնում է նաև էսէռական կազմակերպությունները։

1912 թ. հունիսին գումարվում է Բաքվի էսէռական կազմակերպության խորհուրդը[20]։ Այնտեղ ներկայացված էր նաև էսէռական հայկական կազմակերպությունը, որի մասին մոտ երկու տարի ոչինչ հայտնի չէր։ Հայկական կազմակերպության ներկայացուցիչը նշում էր, որ կուսակցական աշխատանքը կազմակերպությունը վերսկսել է 6 ամիս առաջ։ Կազմակերպության առաջնահերթ խնդիրը համարվում էր հայերեն լեզվով կուսակցական օրգանի հրատարակումը։ Հայկական կազմակերպության ներկայացուցիչը նաև նշում էր, որ Անդրկովկասի պայմաններում կուսակցության անլեգալ աշխատանքը արդյունավետ չէ, անհրաժեշտ է դուրս գալ լեգալ աշխատանքի, հատկապես աշխուժացնել աշխատանքն արհմիություններում։ Զգալով ղեկավար դերը ձեռք բերել բանվորական այդ մասսայական կազմակերպություններում, էսէռները պրոպագանդում էին նրանց «անկուսակցականության» և «չեզոքության» գաղափարը։ Հասկանալի է, որ իրենց նման գործունեությամբ նրանք թուլացնում էին այն պայքարը, որ մղում էին արհմիությունները բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ։

Էսէռների գործունեությունը 1912—1914 թթ. սահմանափակվում էր գաղտնի հավաքների կազմակերպմամբ, թռուցիկների և կոչերի հրատարակմամբ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին էսէռների դերքերն Անդրկովկասում բավականին թուլացան։ Նոր պայմաններում նրանց կազմակերպությունների մի մասը չդիմացավ և ցաքցաքվեց։ Անդրկովկասի էսէռների բազմաթիվ գործիչներ ձերբակալվեցին և աքսորվեցին Ռուսաստանի հեռավոր շրջանները։ Նրանց մի մասը բռնեց վտարանդիության ուղին։

Անդրկովկասում սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունն «իր երկրորդ ծնունդը» ապրեց 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ նրանց պատմության մեջ սկսվեց, ինչպես իրենք՝ էսէռներն էին գրում, աննախադեպ և «փառավոր» մի շրջան[21]։ Իր գործունեությունն ակտիվացրեց նաև էսէռների հայկական կազմակերպությունը։

1918 թ. հունվարի 18-ին Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիայի շենքում իր աշխատանքներն է սկսում էսէռական հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը[22]։ Նրա աշխատանքների մասին Թիֆլիսի աջ էսէռական «Ջնամյա տրուդա» թերթում տպագրված հաղորդագրության մեջ նշվում էր, որ Բաքվից, Ելիզավետպոլից, Սարիզամիշից և այլ քաղաքներից պատգամավորներ չէին եկել, դա պատճառաբանելով «հաղորդակցության

---

20 «Знамя труда», сентябрь, 1912.

21 Աստանազ Մռավյան, նշվ. աշխ., էջ 121։

22 «Знамя труда», 23. I. 1918.

դժվարություններով։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին պատգամավորներ հիմնականում հետևյալ կազմակերպություններից. Թիֆլիսից, Երևանից (Պ. Ստամբոլցյան), Ախալցխայից (Մ. Քոսյան), Կարսից (Վ. Մարգարյան), Էջմիածնից (Ա. Սլկունի) և ուրիշներ։ Հայկական կազմակերպության ներսում նույնպես իրեն զգացնել էր տալիս աջ և ձախ խմբավորումների անհաշտ պայքարը, թեպետ և առանձին հայկական ձախ էսէռական կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ տվյալներ չունենք։

Հայաստանի «անկախության» հռչակումից հետո Ազգային խորհուրդը Թիֆլիսից տեղափոխվում է Երևան։ Նրա կազմում էին դաշնակցականներ, մի քանի մենշևիկներ ու էսէռներ։ «Եկվոր էսէռները,— գրում էր Ա. Մռավյանը,— այստեղ գտան մի քանի ուրիշ ընկերներ ևս և կազմեցին սկզբում Հայաստանի խորհրդի, ապա պառլամենտի սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան»[23]։ 1919 թ. օգոստոսի 1-ին բացվում է հիմնականում դաշնակցականներից բաղկացած Հայաստանի պառլամենտը։ «Մյուս քաղաքական կուսակցություններից,— գրում էր Հ. Քաջազնունին,— ներկա էր միայն սոցիալիստ-հեղափոխականը, որը գրավել էր ընդամենը չորս տեղ»[24]։ Հայաստանի պառլամենտի էսէռական ֆրակցիայի անդամներն էին Ա. Խոնդկարյանը (նախագահ), Լ. Թումանյանը, Դ. Զուբյանը և Վ. Մենախորյանը[25]։

1918—1920 թթ. Հայաստանում համեմատաբար խոշոր էսէռական կազմակերպություններ էին գործում Երևանում, Ալեքսանդրապոլում և Դիլիջանում։ Պառլամենտի էսէռական ֆրակցիան իրեն ակտիվորեն դրսևորեց հատկապես 1921 թ. փետրվարին, երբ կարծես մոռանալով իր վաղեմի «ռուսական կողմնորոշումը», մասնակցեց Ս. Վրացյանի գլխավորությամբ կազմակերպված խռովությանը։ Այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտեի» մեջ որպես խնամատարության և արդարադատության գործերի վարիչներ նշանակվեցին էսէռներ Վ. Մենախորյանը, Ա. Խոնդկարյանը[26]։ Խռովության ջախջախումից հետո նրանք հեռացան արտասահման, իսկ շարքային շատ էսէռներ կամ մտան բոլշևիկյան կուսակցության շարքերը, կամ պարտավորվեցին լոյալ դիրք գրավել սովետական իշխանության նկատմամբ։

Այսպիսով, սոցիալիստական հեղափոխության հաղթանակը լիովին որոշակի դարձրեց էսէռական մանրբուրժուական սոցիալիզմի կրախը նրա թե՛ գաղափարախոսության և թե պրակտիկ գործունեության ընդավառներում։ Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ՝ «ֆրազի հերոսները»[27] չդիմացան և չէին էլ կարող դիմանալ հասարակական հարաբերությունների հեղափոխական վերափոխման մեծ բեկմանը և, անփառունակ հետք թողնելով, հեռացան պատմության թատերաբեմից։

ОБ АРМЯНСКОЙ ОРГАНИЗАЦИИ ПАРТИИ СОЦИАЛИСТОВ-РЕВОЛЮЦИОНЕРОВ (1907—1921)

САСУНИК МЕЛИКЯН

Резюме

Создание в июне 1907 г. Армянской организации партии социалистов-революционеров явилось заметным событием в жизни эс-

---

23 Ասքանազ Մռավյան, նշվ. աշխ., էջ 131։

24 Հովհ. Քաջազնունի, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 37—38։

25 «Սոցիալիստ-հեղափոխական», Երևան, 11. IV. 1920։

26 Ս. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 548։

27 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 32, էջ 285։

еров Закавказья. Инициаторами создания этой организации являлись так называемые «молодые дашнакцаканы». Вскоре были созданы отделения Армянской организации партии социалистов-революционеров также в Тифлисе, Александрополе, Карсе, Ереване, Шуше, Елизаветполе, Батуми и других городах. Действующие в Закавказье армянские организации эсеров в своих рядах насчитывали около 1200 членов. В последующие годы Армянская организация партии социалистов-революционеров, хоть формально и существовала, однако значительно ослабла. Период активизации ее деятельности в Закавказье приходится на 1917—1920 гг.

Победа социалистической революции обусловила полный крах мелкобуржуазного социализма как в России, так и в Армении. Эсеры не смогли противостоять коренному перелому в общественных отношениях и, оставив бесславный след, сошли с исторической арены.